

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 152

Միւս յաջորդ ընդհանուր առարկութիւնը նախասահմանութեան Վերակազմ վարդապետութեան դէմ գալիս է համարներից որոնք ուսուցանում են թէ Աստուած չի կամենում որ որեւէ մէկը կորչի, այլ կամենում է որ ամենը փրկուի (Եզեկիէլ 18:23, 32, 33:11, Ա. Տիմոթէոս 2:4): Ակնարկելով այսպէս հատածներին քննադատողները վիճում են որ այսպէս համարներ անհամաձայն են (անհամատեղելի են) Վերակազմ վարդապետութեան հետ որ Աստուած ոմանց նախասահմանում է փրկութեան եւ ուրիշներին դատապարտութեան:

Վերակազմ վարդապետութիւնը զանազանում է Աստուծոյ կամքի երկու առումները՝ Աստուծոյ գաղտնի կամքը, նաեւ ճանաչած որպէս Նրա հրովարտակային կամքը. եւ Աստուծոյ յայտնուած կամքը, նաեւ ճանաչած որպէս Նրա հրահանգային կամքը (Երկրորդ Օրինաց 29:29): Աստուծոյ գաղտնի կամքը Իր յաւիտենական կամքն է որով Նա իրագործում է բոլոր այդ ինչ որ Նա հրովարտակել է՝ թէ բարին եւ թէ չարը: Այս յաճախ ծածկուած է մեզանից մինչեւ այն իրագործում է կամ յայտնում է Աստուծոյ (Եսայիա 14:24, 27, 46:9-11): Աստուծոյ այս կամքը երբեք չի կարող խախտուել կամ խափանուել, եւ բոլորովին ու կատարելապէս կիրագործուի:

Իսկ Աստուծոյ յայտնուած կամքը այդ ամեն բաներն են որ Աստուած յայտնել է Իր Խօսքում ինչպէս Իր պատկերանքներն ու հրահանգները: Այն բացատրում է այդ ինչ որ Աստուած պահանջում է մարդուց եւ թէ ինչպէս պիտի մարդը հաւատայ եւ վարուի Նրա առջեւ (Երկրորդ Օրինաց 30:15-16): Օրինակի համար Աստուածաշունչը յստակօրէն յայտնում է թէ Աստուծոյ կամքն է որ մենք սիրենք Նրան, որ սիրենք մեր դրացուն, որ չսպանենք, որ սուտ չստենք, որ գողութիւն չհանենք, եւ այլն: Նմանապէս, փրկութեան վերաբերեալ, Աստուծոյ կամքն է որ ամենը իրենց մեղքերից ապաշխարեն եւ Նրան հաւատան, եւ Նա եռանդուն է ներելու եւ փրկելու այսպիսիներին (Յովհաննէս 3:16, Գործք Առաքելոց 17:30, Հռովմայեցիս 10:13): Այս բոլորը բաներ են որ Աստուած կամենում է կամ դրանցով հաճենում է: Մրանք բխում են Աստուծոյ նկարագրից ու Նրա ստեղծութեան հանդէպ եղած Իր դիրքորոշումից: Աստուծոյ յայտնուած կամքը այդ ինչ է որ Աստուած հրամանում է մարդուն անել՝ որն բարի է նրանց համար եւ հաճելի Իր առջեւ. բայց այս գաղտնի կամքից եւ չի ասում որեւէ բան դրա առթիւ:

Մարդիկ սուտ են ասում, խաբում են, գողանում են, եւ սպանում են. մարդիկ անարգում եւ մերժում են Աստուծուն ու Նրա պատգամը: Նրանք կարող են եւ անհնազանդում ու խախտում են Աստուծոյ յայտնուած կամքը: Բայց ոչ որ կարող է խախտուել կամ խափանուել Աստուծոյ գաղտնի կամքը: Ուստի նոյնիսկ մարդկանց մեղքերը ու Աստուծոյ յայտնուած կամքի խախտումը նաեւ Աստուծոյ հրովարտակուած են որպէս Իր գաղտնի կամքի մաս: Եւ այս բոլորի մէջ Աստուած մնում է բացարձակապէս անարատ ու անմեղ, որովհետեւ թէպէտ Նա հրովարտակել է ամեն ինչ որ տեղի է ունենում, սակայն Նա հեղինակը չի ամեն ինչի որ տեղի է ունենում (Յոր 34:12, Մաղմուս 92:15, Ամբակում 1:13, Ա. Յովհաննէս 1:5):

Սուրբ Գրքում կան բազմաթիւ օրինակներ սրա վերաբերեալ: Օրինակի համար Դատաւորաց 14:1-4-ում շատ պարզ է որ Սամփսոնի փափաքն ու արարքը մեղսալի էին եւ Աստուծոյ հրամանի՝ Իր յայտնուած կամքի հակառակ. բայց նաեւ շատ պարզ է որ այդ եղելութիւնը դրա բոլոր մանրամասնութիւններով անհերքելիօրէն հրովարտակուած էր Աստուծոյ՝ որպէս Իր գաղտնի կամքը: Ուրեմն Աստուած հրովարտակում է այդ ինչ որ Նա արգելում եւ ատում է: Նոյնը ճիշտ է մարդկանց փրկութեան վերաբերեալ: Աստուածաշունչը սովորեցնում է որ Աստուած կամենում է որ ամեն մարդիկ ապաշխարեն եւ փրկուեն (Իր յայտնուած կամքը), բայց այն նաեւ սովորեցնում է որ Աստուած հրովարտակել է որ միայն ոմանք կ'ապաշխարեն ու կ'փրկուեն, մինչ ուրիշները կ'մերժեն Նրան եւ կ'դատապարտուեն (Իր գաղտնի կամքը): Աստուծոյ կամքի այս երկու իմաստները յստակօրէն ուսուցանուած են Սուրբ Գրքում: Եւ ի վերջոյ Աստուծոյ հրովարտակային կամքը գերազանցում է Իր հրահանգային կամքից:

Արմենական աստուածաբաններ ընդհանրապէս մերժում են Աստուծոյ այս երկու կամքերը, բայց երբ հարցնում են նրանցից թէ ինչու բոլոր մարդիկ չեն փրկուում, նրանց սովորական պատասխանն է որ Աստուած թոյլ է տալիս մարդկանց ընտրելու ազատութիւնը ու կարողութիւնը: Նրանք ասում են որ թէպէտ Աստուած կարող է սակայն Նա երբեք չի արգելի կամ էլ ստիպի մարդու կամքը որեւէ ուղղութեամբ: Բայց այս ասելով նրանք իրականում ընդունում են, գիտակցում են, որ Աստուծոյ կամքումը կան տարբեր իմաստներ՝ ուր մէկ ձեռքում Աստուած կամենում է որ ամենը փրկուեն, իսկ միւս ձեռքում Նա կամենում է որ մարդը ընտրի ըստ իր ազատ կամքը: Ուրեմն նրանք էլ Աստուծոյ կամքի մէջ զանազանութիւն են ցոյց տալիս ու նշանակում: Ուրեմն պարզապէս Արմենական աստուածաբանութեան մէջ Աստուած կամենում է մարդու ազատ կամքի պահպանութիւնը աւելի քան թէ կամենում է բոլորի փրկութիւնը: Իսկ Վերակազմ աստուածաբանութեան մէջ Աստուած կամենում է Իր փառքը աւելի քան թէ կամենում է բոլորի փրկութիւնը: Կարեւոր է նշել թէ Աստուած հաճոյք չի ստանում մեղաւորի ցաւից կամ մահից ինքնիրեն. իսկ դրանք միջոցներ են որոնք ծառայում են աւելի մեծ նպատակին՝ ցուցադրելով մեղքի դէմ եղած Աստուծոյ բարկութիւնը եւ Իր սրբութեան պահպանման մէջ Նրա զօրութիւնը, եւ այսպիսով ցուցադրելով Իր պայծառ փառքը: Այստեղ մենք տեսնում ենք մի մեծ տարբերութիւն այս երկու աստուածաբանութեան ձեւերի կամ սիստեմների միջեւ՝ մէկը լինելով մարդա-կենտրոն, իսկ միւսը Աստուածա-կենտրոն: Վերակազմ աստուածաբանութեան մէջ այդ ինչ որ Աստուած յաւիտենապէս հրովարտակել է կ'կատարուի, եւ Իր գերագոյն ցանկութիւնը կ'յազգեցի՝ ոմանց փրկութեամբ եւ ուրիշների դատապարտութեամբ, եւ այս ամենալիովինօրէն երեւան կ'բերի Նրա փառքը: Աստուած գնահատում է Իր փառքը ամեն բանից աւելի (Եսայիա 42:8, 43:7, 48:11):